«Հայաստա՛ն» ցուցահանդեսը Նյու-Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանում

Վաստակավոր արվեստաբան և բյուզանդիայի թեմայով հայտնի մասնագետ Հելեն Էվանսը երկար տարիներ աշխատել է Մետրոպոլիտեն արվեստի թանգարանում: Նրա կազմակերպած ցուցահանդեսների շարքում կարելի է նշել, օրինակ, «Բյուզանդիայի համբավը (843-1261թթ.)», 1997 թ. կամ «Բյուզանդիա. հավատք և զորություն (1261-1557թթ.) 2004 թ.: Ակնհայտ է, որ այդ թեմաները կապվում էին հարևան Հայաստանի հետ: Տիկին Էվանսի աճող հետաքրքրությունը Հայաստանի արվեստի հանդեպ վերջապես նյութականացվեց՝ ներկայումս լայնորեն գովազդվող «Հայաստա՛ն» խորագրով ցուցահանդեսի ձևով: Ցցուցահանդեսի անվանման այդ աննախադեպ բացականչականը կարող էր զարմանք առաջացնել: Բյուզանդիայի թեմայով վերոհիշյալ ցուցահանդեսների համեմատ, այս ցուցահանդեսի անվան մեջ նկատելի է ցուցահանդեսին վերաբերող պատմական շրջանի նշման բացակայությունը: Առաջին հայացքից թվում է, թե ցուցահանդեսը պետք է ընդգրկի հայոց պատմության երեք հազարամյակները, կամ գոնե, եթե որևէ մեկը որոշի բացառել Ուրարտական ժամանակաշրջանը, մ.թ.ա. 500 թվականից մինչև մեր ժամանակները: Ցավոք, այս դեպքում այդպես չէր: Ցուցահանդեսը սկսվում է 4-րդ դարի սկզբին Հայաստանից քրիստոնեացումից, հեթանոսական Հայաստանի հազարամյակի լիակատար բացակայությամբ: Վառ օրինակ է այն, որ ամենահայտնի հայոց թագավոր Տիգրան Մեծի (մ.թ.ա. 1-ին դ.) մասին անգամ հիշատակում չկա: Դա տարօրինակ և անընդունելի է թվում: Այսպիսով, ավելի ճիշտ կլիներ ցուցահանդեսն անվանել «Քրիստոնյա Հայաստան», իսկ ներածական վահանակին կարճ բացատրություն տեղադրել առ այն, որ Հայաստանը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ, սակայն քրիստոնեությունը արվեստում նոր դարաշրջան է բացել: Այդպես էր Փարիզում «Սուրբ Հայաստան» խորագրով ցուցահանդեսի պարագայում (Լուվր, 2007):

Այս ցուցահանդեսում ցուցադրված նմուշների արժեքն ապշեցուցիչ է: Ցուցահանդեսի կազմակերպիչները կարողացել են կազմակերպել չափազանց արժեքավոր ցուցանմուշների փոխառումը: Որոշ ցուցանմուշների փոխառման վերաբերյալ նախորդ խնդրանքերը հանդիպում էին համակարգային մերժման, ինչպես, օրինակ, հայազգի մեծն մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ձեռագրի պարագայում (13-րդ դ.), որը տրամադրվեց Երուսաղեմի Հայոց պատրիարքի կողմից: Նշենք նաև Մուշի Սուրբ Կարապետ վանքի հեքիաթային փայտե դուռը, որն այժմ անձնական հավաքածուի մաս է: Սա ստեղծում է ցուցահանդեսի ընթացքում նրանցով հիանալու եզակի հնարավորություն:

Այստեղ շատ այլ նմանատիպ օրինակներ կարելի է նշել, սակայն ցուցահանդեսը միայն գլուխգործոցների սովորական հավաքածու չէ: Այն նաև պետք է կատարի ուսուցողական գործառույթ և այցելուին ներկայացնի իրեն անհայտ աշխարհը, օգնի նրան ճանաչել այն:

Ցավոք, այդպես չէր «Հայաստա՛նի» պարագայում: Ամենից առաջ, զարմանալի է ցուցահանդեսի ամբողջ տարածքում քարտեզների բացակայությունը: Արդյո՞ք բոլորը գիտեն, թե ինչ է Հայաստանը և որտեղ է այն գտնվում: Նույնիսկ նրանց համար, ովքեր գիտեն նրա մասին, արդյո՞ք գիտեն, թե որտեղ են Կիլիկիան, Վասպուրականը, Սյունիքը և այլն: Այս նահանգները զուտ վերացական անվանումներ են: Նույնիսկ վերջին՝ առևտրի ուղղություններին նվիրված մասում, հստակ ներկայացված չէ ոչ մի ուղի: Ինչ վերաբերում է կատալոգին, ապա նրա սկզբնամասում (էջ 24-25) ներկայացված է մեկ քարտեզ, որն ընդգրկում է Ամերիկայի արևելյան ափերից Ճապոնիա ընկած տարածքը, իսկ

Հայաստանն այնքան փոքր է, որ շատ քաղաքների և վանքերի անվանումներ անընթեռնելի են, իսկ գավառների անվանումները լիովին բացակայում են: Դա զգալի բացթողում է: Առնվազն կարող էր այն մասամբ համալրվել համապատասխան պատմական բացատրություններով, սակայն բացակայում են թե՛ ցուցադրությունում, թե՛ կատալոգում: Ցուցահանդեսի կազմակերպման հարցում էապես նպաստած անձանց ցանկում միայն արվեստաբաններ են: Այնտեղ գրեթե պատմաբան չկա, չնայած այն փաստին, որ արվեստի էվոլյուցիան չի կարող առանձնացվել պատմության շրջանակներից: Որպես հետևանք այդպիսի պատմական ստուգաբանման պակասի, ձևակերպումները երբեմն ճշգրիտ չեն, իսկ սխալները հաճախակի են: Թույլ տվեք մեջբերել դրանցից մի քանիսը.

- 387 թ-ից հետո Հայաստանը չի դարձել վասալ Իրանի համար, այլ բաժանվել է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև (էջ 209),
- Ղարսի անեքսիան տեղի է ունեցել 1065 թ-ին, այլ ոչ «1054»-ին (էջ 34),
- Թագուհի Մելիսենդայի մայրը «Եդեսիայից» չէր, այլ Մելիտենից (էջ 35),
- Զաբելի առաջին ամուսինը չի հեռացվել, այլ դատապարտվել է մահվան (էջ 35, 130),
- Լևոն V թագավորը չի թաղվել Սենտ Դենիում, որտեղ նրա գերեզմանաքարը տեղադրվել է 19-րդ դարում, այլ Սելեստինս վանական համալիրում (էջ 36),
- Ղրիմի ափերի «Ծովային Հայաստան» (Armenia Maritima) անվանումը առասպել է (էջ 88),
- Ղրիմի այս հարավային ափը միայն ջենովացիների ձեռքում էր, այլ ոչ «վենետիկցիների և ջենովացիների» (էջ 164),
- Սուլթան Մեհմեդ II-ի և Բուրսայի Արքեպիսկոպոսի կողմից 1461 թ. Հայոց Պատրիարքության հիմնադրումը մաքուր առասպել է (էջ 172, 253),
- Երուսաղեմի պատրիարքը սահմանափակումներ չուներ «տեղական մակարդակով» (էջ 213):

Ցուցահանդեսի ստորագրությունները և կատալոգի բովանդակությունը լի են՝ ցուցանմուշներին վերաբերող հետաքրքիր տվյալներով, սակայն շրջանցում են պատմական համատեքստը: Օրինակ, ուսումնասիրենք Իտալիայում գտնվող հայերի հետ կապված հատվածը (էջ 164). որտե՞ղ, ինչու՞ և ինչպե՞ս են նրանք բնակություն հաստատել այս երկրում: Չկա պատասխան: Ավելի վատ է Երուսաղեմի պարագայում (էջ 164), որտեղ պատրիարքարանի հիմնման փաստը հիմնովին անտեսվել է, իսկ հայտնի խճանկարների մասին հիշատակվում է առանց որևէ վերարտադրության կամ լուսանկարի, միակ նկարը պատկերում է տաճարի ներսը: Իսկ ինչ վերաբերում է Քյոմուրջյանի հայտնի քարտեզին (1691թ.), ապա ինչու՞ չկա ստորագրություն կամ նշում (էջ 301), որը կհուշի վերջինիս արտասովոր պատմության մասին. այն կորած էր համարվում, մինչ երեք դար հետո նրա պատահաբար հայտնաբերվելը Բոլոնայում: Ավելացնենք, որ կատալոգները սովորաբար տեղեկացնում են յուրաքանչյուր նմուշի մասին, թե նախկինում ինչ ցուցահանդեսներում է ներկայացվել, ցուցանմուշներից ոչ մեկի վերաբերյալ նման տվյալներ չեն բերվում: Թե՛ ցուցադրությունը, թե՛ կատալոգը օգտագործում են «Կիլիկիայի թագավորություն» սխալ անվանումը: Նման թագավորություն երբեք գոյություն չի ունեցել: Կիլիկիայում սակայն եղել է «Հայոց թագավորություն», որն այդպես է կոչվել ոչ միայն հայերի, այլև նրանց հարևանների կողմից (արաբներ, հույներ, ֆրանկներ, ...): Աշխարհագրական տեսանկյունից ավելի ճշգրիտ լինելու համար, կարելի է խոսել «Կիլիկյան Հայաստանի»

մասին: Մի քանի հարևան սրահներում, անկախ «Հայաստա՛ն» ցուցահանդեսից, թանգարանը ունի մշտական ցուցադրություն, որում ցուցադրում է տվյալ թագավորությունից ծագող արծաթե մետաղադրամներ: Այդ մետաղադրամների վրա կարող ենք տեսնել «Հայոց թագավոր» գրությունը: Ինչու՞ այդ մետաղադրամները չեն ցուցադրվել ցուցահանդեսի շրջանակներում: Ինչ վերաբերում է վերջին Հայոց թագավորության հայրենիքից հեռու ստեղծմանը, ապա ավելի մեծ խնդիր է առաջանում: Կարելի է տեղեկանալ, որ ինչ-որ պահի հայերը տեղափոխվել են Կիլիկիա (էջ 34), և դա առանց որեւէ բացատրության: Արդյո՞ք նրանք տուրիստներ էին: Մեկ այլ վայրում տրված պատճառը, թե «Բյուզանդիան պարտվել է Մանազկերտի ճակատամարտում» (էջ 134), աբսուրդ է: Բյուզանդական կայսրության և սելջուկ թուրքերի միջև այդ ճակատամարտը տեղի է ունեցել 1071 թ-ին և առանց հայերի մասնակցության: Իսկ հայերի վերաբնակեցման պատշաճ պատճառը պետք է գտնվի մի փոքր ավելի վաղ, երբ նույն սելջուկ թուրքերը գրավեցին Անին 1064 թվականին: Ինչու՞ է այս իրադարձությունը այդ տեղում անտեսվել, ինչպես 31-րդ էջում, որտեղ կարելի էր կարդալ, առանց որևէ բացատրության, որ Անիի հուշարձանները դեռևս ավերված են: Այդ ավերակները գտնվում են «Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության այսօրվա փակ սահմանի վրա» (էջ 66): Ո՞ր կողմում: Եվ ինչու՞ է այդ սահմանը փակ: Այն դեպքում, երբ ճշգրիտ հիշատակվում է, որ 1375 թ-ին (էջ164) Մամլուքների կողմից ոչնչացվել է Կիլիկյան թագավորությունը, ինչու՞ չի հիշատակվում, որ 1064 թվականին Անիայում թուրքերը ոչնչացրեցին Բագրատունյաց թագավորությունը: Այսպես, թե այնպես, «թուրքեր» բառը կատալոգում բացակայում է: Արդյո՞ք դա պատահականություն է: Այս հարցերը կարող են հանգեցնել քաղաքական բնույթի մտորումների: Ինչպես տեսանք, ցուցահանդեսը սկսվում է Հայաստանի քրիստոնեացումից, ինչը իմաստ կունենար, եթե դա հստակորեն նշվեր: Այն ավարտվում է 18-րդ դարով՝ թույլ տալով անտեսել 19-րդ դարի հայերի ողբերգական ճակատագիրը և հատկապես ցեղասպանության թեման:

Ճիշտ այնպես, ինչպես չի նշվում Անիի ճակատագրի մասին, որոշ այլ հարցերի անդրադարձվում է խորհրդավոր կերպով.

- Նշվում է «Մուշում սբ. Առաքելոց վանական համալիրի» մասին (էջ 95), առանց տեղեկացնելու, որ այն ոչնչացվել է 20-րդ դարում թուրքերի կողմից:
- Ցուցահանդեսի գանձերի շարքում կարող ենք տեսնել այս վանքի փորագրված դուռը (էջ 109): Ինչպե՞ս է այդ դուռը գոյատևել, չնայած ամբողջ համալիրի ոչնչացմանը: Ինչու՞ դրա մասին ոչ մի խոսք չկա: Հնարավոր է այն պատճառով, որ պատասխանը պետք է ներառեր «ցեղասպանություն» բառը:

Բարբարոսության միակ հստակ հիշատակումը վերաբերում է Նախիջևանում Ջուլֆայի խաչքարերի գերեզմանին: Այնտեղ կարդում ենք (էջ 95), որ «դրանք դիտավորապես ոչնչացվել են 1990-ական թվականներին, որպեսզի վերացնեն այս տարածաշրջանում հայկական ներկայության ցանկացած հետք»: Թեև ամսաթիվը սխալ է, դա եղել է 2005 թվականին, այնուամենայնիվ, տեղեկատվությունն ինքնին, գոնե, ճշմարիտ է: Բայց ինչու՞ այս հանցագործության հեղինակները, այսինքն, Ադրբեջանը, չեն հիշատակվում: Նախիջևանի այդ գավառում շատ վանքեր են եղել, որոնք լուսանկարվել են մինչև Ադրբեջանի կողմից ամբողջությամբ քանդվելը: Վանքերի մասին հետք չկա ո՛չ ցուցադրությունում, ո՛չ կատալոգում: Արդյո՞ք ճիշտ է խուսափել այդ պետությանը մեղադրելուց:

Արդյո՞ք նրանք են իշխանության վրա ճնշում գործադրել, որպեսզի խուսափեն որևէ հիշատակումից, ինչը կարող է մատնանշել հայերի նկատմամբ իրենց հանցագործ քաղաքականությունը: Քննարկենք, սակայն, մեկ այլ վարկած:
Տվյալ հանրապետությունների՝ ԱՄՆ-ի հետ ունեցած բարեկամական հարաբերությունները կարող էին հանգեցնել ավտոմատ ցենզուրայի՝ թանգարանի ղեկավարության նախաձեռնությամբ: Ի վերջո, քարտեզների անհավանական բացակայությունը կարող է շատ լավ տեղավորել այս սխեմայում: Քանզի քարտեզները պոտենցիալ վտանգավոր գործիքներ են: Նրանք ենթադրում են սահմաններ, բնակչության ներկայություն, հանգեցնում են հարցերի, թե ինչու՞ այս կամ այլ տարածաշրջանում նախկինում այնքան մեծաթիվ և ակտիվ հայերը լիովին անհետացել են: Դրա պատասխանը պետք է լինի Անկարայից կամ Բաքվից: Ցուցահանդես կարելի է այցելել թանգարանի ընդհանուր տոմսով: Այսպիսով, շատերն են այն դիտում: Հետևում էի այցելուներին, ակնհայտ էր, որ մարդիկ հիացած են այն գեղեցկությամբ, որի ականատեսն են, բայց հավասարապես ակնհայտ էր, որ ցուցահանդեսի համատեքստից ոչինչ չեն հասկանում: Ինչպիսի կորուստ: Հայաստանը պետք է շարունակի սպասել:
Եզրափակելով, կարելի է ասել, որ «Հայաստա՛ն» ցուցահանդեսը՝ մինչև 18-րդ դ. հայ քրիստոնեական արվեստի հեքիաթային ցուցադրություն է, սակայն հայկական ցուցահանդեսը՝ լիարժեք ձախողում է, որն արժանի չէ այնպիսի հեղինակավոր հաստատության, ինչպիսին է Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը:

Քլոդ Մութաֆյան

8821 zn.